

**5.16. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը
2016թ. հունվար-մարտին**

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2016թ. հունվար-մարտին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

**Ստանդարտացման, սերտիֆիկացման և հավատարմագրման գործունեության
հիմնական ցուցանիշները, 2016թ. հունվար-մարտ**

	<i>միավոր</i>
	Ընդամենը
<i>Ստանդարտացում</i>	
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	107
այդ թվում՝	
ՀՀ ստանդարտներ	1
Միջպետական ստանդարտներ	95
միջազգային և եվրոպական ստանդարտներ	11
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	4
<i>Սերտիֆիկացում</i>	
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	160
որից՝	
ներմուծվող արտադրանքի համար	66
արտահանվող արտադրանքի համար	15
<i>Հավատարմագրում</i>	
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	1